ՓՈՍՆԶ

ԹԻՒ 1235 — ՇԱԲԱԹ — 1877 ԴԵԿՏԵՄԲԵՐ 10

ԱԶԳԱՅԻՆ

Իններորդ նամակ՝ Վ. սեմ. Ստեփան փաշայի Ասլանեան։

Սիրելի խմբագիր բարեկամ.

Վերջին նամակաւս՝ մեր զաւակաց դաստիարակութեան ժամանակ, մտքին հետ սիրտն ու զգայարանքը և ամբողջ մարմինը կրթելու պէտքն յայտնեցի։ Բայց ինչպէ՞ս. — ահաւասիկ կարծիքս.

Լեզուագիտութեան, քանակագիտութեան և այլ ուսմանց և գիտութեանց հետ՝ տղայոց
Բարոյական,
Քաղաքավարութիւն,
Գծագրութիւն,
Երգեցողութիւն և
Մարմնամարզութիւն սովրեցնելու է։

Եւ որպէսզի այս նորեկ ուսմունք թէ՛ աշակերտաց ժամանակին մէջ միջոց, և թէ՛ դպրոցաց հաշուէկշռոյն մէջ իրենց բաժին գտնեն, հարկ է մեր արդի ընթացքն ուսման բարեկարգել և դպրոցաց մէջ նոր դասակարգութիւն մը մտցուցանել։

Եթէ կը ներես, քեզ աստ ծրագրեմ մեղի վայելուչ ընթացք դաստիարակութեան մը, վերջը մանրամասնութեանց մէջ կը մտնենք, եթէ հարկ տեսնուի։

Դպրոցներնիս երեք աստիճանի վերածելով, կամ երեք կարգ բաժնելով, ընտելարան կամ ծաղկոց, նախակրթարան և ուսումնարան՝ անուն տանք ասոնց։

Ա. ԸՆՏԵԼԱՐԱՆ ԿԱՄ ԾԱՂԿՈՑ։ Ասոնց համար պէտք է ընդունիլ միևնոյն գրութիւնը, զոր նկարագրեցի աւստրիական Մանկանց պարտիզի համար։

Բ. ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ։ Ասոնց մէջ տղայք վեց տարուէն սկսեալ ընդունելով, վարժել վեց տարի սա՛ ուսմանց մէջ.

Ուսումն մայրենի լեզուի
Թուաբանութիւն
Երկրաչափական ծանօթութիւնք
Աշխարհագրութիւն
Տիեզերագրական ծանօթութիւնք
Պատմութիւն
Քրիստոնէական վարդապետութիւն
Բարոյական գիտութիւն
Քաղաքավարութիւն
Գծագրութիւն
Երգեցողութիւն
Մարմնամարզութիւն.

Գ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ.՝

Ուր նախակրթութիւնն աւարտած երկոտասանամեայ տղայք ընդունելով, վեց տարուան մէջ ուսուցանել

Լեզուագիտութիւն
Բնական պատմութիւն
Փիլիսոփայութիւն
Բնական գիտութիւն
Տարրալուծական գիտութիւն
Քանակագիտութիւն կատարեալ
Նկարչութիւն
Միւզիք.

Բայց ասոնք սովրեցնելու համար Դաստիարակ պէտք է և Դասագիրք. ո՞ւրկէ պիտի գտնենք։ Դաստիարակի համար անպատճառ Եւրոպա դիմելու ենք. և ըստ որում եւրոպացիք մեզ նախակրթութեան մասին ծառայութիւն չեն կրնար ընել, կը մնայ մեզնէ մարդ ղրկել Եւրոպա, և մասնաւորապէս Գերմանիա և Զվիցցերա, ուսեալ, լեզուագէտ և բարեբարոյ երիտասարդներ, և դաստիարակութեան մեծ և նուիրական արհեստը ասոնց սովրել տալ և ասոնցմով մեր զաւակաց կրթութեանը ձեռնարկել։ Ասի ձեզ արտառոց պիտի երևայ, գիտեմ, բայց անհրաժեշտ է. ահաւասիկ պատճառը. դաստիարակ կամ դասատու ըլլալու համար բաւական չէ ուսմունքը լաւ գիտնալ. այլ սովրեցնելու եղանակն ալ գիտնալու է։ Այս եղանակը բոլորովին տարբեր է Եւրոպա, և վերջին աստիճան կատարելութեան հասած. ասի սովրելու է. ձեզ համոզելու համար մէկ քանի օրինակ տամ։

Մենք մեր տղոց գիր ճանչցուցնելու համար Գնակ կամ Քերական մը ձեռքը կուտանք և այբէն սկսեալ մինչև Ֆեն, գրերուն անունները կը հնչենք և տղեկէն ա՛յն կը պահանջենք որ սովրի. մեր ծաղկոցներու դաստիարակներուն մտքէն ալ չանցնիր որ տղան գրերուն յորջորջումը սովրելու տեղ հնչած ձայնը պէտք է սովրի, և բ, փ, պ, և գ, կ, ք, և դ, թ, տ, և ճ, ց, և հ, յ, և ռ, ր, և այլ գրերուն հնչմանց զանազանութիւններուն պէտք է վերահասու ըլլայ. ուստի մեր խեղճ մանկունք ամիսներով և երբեմն տարիներով ծաղկոցը կը դեգերին և անկէ ազատելէն ետքը ընթերցարանի մէջ նաև ուսումնարանի մէջ քիչ շատ բան սովրելէն ետքը ն ալ վերոյիշեալ գրերուն հնչման տարբերութիւնները չեն կրնար գիտնալ։ Ի՞նչ կը նեն եւրոպացիք. ես այս տեղ տեսայ նախակրթարանի առաջին կարգին մէջ. դաստիարակը մասնաւոր տախտակի մը վրայ ի տե՛ս ամենուն մէկ քանի գրեր կը կախէ՝ որ առանձին և մեծ մեծ տպագրեալ և տախտակներու վրայ փակած են, և կ'սկսի ամեն մէկուն ձայնը հնչել, բուն այն ձայնը որ գիրը կը նշանակէ և տղայք դաստիարակին հնչած ձայնը կը կրկնեն միաբերան, և ամենուն աչքը գրոյն ձևին վրայ ուղղուելով. դաստիարակը գրերուն առանց այբուբենական շարքին ուշ դնելու, ամենէն պարզերէն կ'սկսի և հետզհետէ ի դժուարին կը յառաջանայ. և երբ կարգը այն գրերուն կուգայ որ ձևերնին տարբեր, բայց հնչիւնին նմանորինակ կը թուի, բաղդատութիւններ կընէ, քանիցս կը կրկնէ այս տեսակներուն հնչմունքը, և տղոց միտքը լաւ տպաւորելու համար իրարմէ տարբերութիւնին՝ օրինակներ մէջ կը բերէ, չէ թէ գրով կամ կարդալով, զի տղայք տակաւին գիր կարդալ չը գիտեն. այլ բերնուց, և տղայք դիւրաւ կը մբռնեն այս օրինակները. ինչպէս՝ օրինակի համար հայերէնի վրայ խօսելով գ և ք գրերուն հնչմանց տարբերութիւնը լաւ հասկցունելու և մտքերնուն մէջ տպաւորելու համար կըսէ. «ահա այս գրերուն հնչմանց տարբերութիւնը ա՛յնքան կարևոր է միտք պահել որ մէկին տեղ միւսը գործածելու ըլլաք նէ, խօսքերնիդ չը հասկցուիր, զի գայլ բառը գով կը գրուի և գիշատիչ կենդանի մը կը նշանակէ, իսկ քով ձեր քայլելու ժամանակ ոտքերնիդ փոփոխակի գետին դնելով առած քայլերնիդ կը հասկցունէ». այս կերպով խիստ կանուխ կսկսի ուղղագրութեան վրայ ծանօթութիւններ տալ։ Եւ որպէսզի տուած օրինակն ալ տղայք չը մոռնան և անկէ ալ օգուտ քաղեն, և այբուբէն սովրելու տաղտկալի ժամանակը միանգամայն զուարճանան, դաստիարակը գայլի վրայ կարճ նկարագրութիւն մը կընէ, առակ մը ն ալ կը խօսի որ տղոց բան սովրեցնելու ամենէն ազդու և ամենէն օգտակար եղանակն է։ Վերջը կանցնի քայլ բառին, և ասոր վրայ մէկ երկու տողայ ոտք հանելով, զանազան տեսակ քայլեր առնել կուտայ, զինուորական քայլ, վազելու քայլ և այլն. և ասկէ ալ տղոց մտքին մէջ գաղափարներ կը մացուցնէ։ Վերջապէս գայլին և զանազան քայլերուն պատկերները ցոյց կուտայ տղայոց. և երբ հարցման ժամանակը գայ, ո՛չ միայն ըսածներուն ամենը տղոցմէն կը պահանջէ, այլ պատկերն ալ ճանչնալ և ցոյց տալերնին կուզէ, և տղայք սիրով և զուարճանալով կընեն։ Ասով տղայք գ և ք գրերը սովրելու ժամանակ, իրարմէ հնչման տարբերութիւններն ալ կը սովրին, գայլ և քայլ բառերուն նշանակութիւնները և ուղղագրութիւնն ալ կուսանին. այս երկու բառերուն նշանակած կենդանւոյն և գործողութեան վրայ ծանօթութիւններ կը շահին, ասոնց պատկերները տեսնելով՝ ճանչնալ և որոշել կը սովրին, և այս ամենը տակաւին ծաղկոցին մէջ և գիր ճանչնալու ժամանակ։

Տղոց գիր սովրեցնելու եղանակին աւելի հետաքրքրական է և օգտակար։ Ըստ որում եւրոպական գրերը գծերու կանոնաւոր բաղկցութեամբ շինուած են, դաստիարակը փոխանակ գիր գրել սովրեցնելու, գիծ գծել կուսուցանէ. և երբ աշակերտք զանազան դիրքով ուղիղ և կոր գծեր գծելու կը վարժին, դաստիարակը կսկսի նախ մէկ գծէ կազմուած և հետզհետէ երկու և երեք գծերէ բաղկացած գծերը գծել և ցոյց տալ, իրարու քիչ շատ նմանութիւն ունեցողները իրարմէ զանազանող յատկութիւններով հանդերձ սովրեցունել. վերջապէս կը հասնի այն վիճակին ուր աշակերտաց բոլոր գրերը գրել կուտայ, իրարու նմանները խումբ խումբ, և ապա այբուբէնական կարգաւ. ետքը կանցնի զանազան տեսակ գծերու, գլխագրերի, զարդագրի և այլն, և սովորական ընթացիկ գրութեան մէջ գրերուն իրարու հետ կապակցութեան կանոնները կը սովրեցունէ. և այս կերպով աշակերտք ո՛չ միայն գիր գրելու կը վարժին, այլ գեղագրութիւն կը սովրին այնքան ժամանակի մէջ, ուր մեր դպրոցական աշակերտք հազիւ կը հասնին պարզ այբուբէնը գրել սովրելու։ Գիր սովրեցունելու համար Եւրոպա մասնաւոր մեթոտ մը կայ և անոր պէտք եղած գծեալ թղթերն ու օրինակներն ամեն տեղ կը գտնուին։ Մէկ քանի տարի առաջ ազգասէր բանասէր մը սոյն սա՛ մեթոտը մեր հայերէն գրերուն յարմարցունելով և պէտք եղած օրինակներն կարծեմ ի Լայբզիկ (Գերմանիոյ) տըպել տալով ամեն տեղ և մասնաւորապէս 'ի Պոլիս շատերուն ղրկեց. բայց չը գիտեմ թէ մեր դպրոցներուն մէջ ասոր գործադրութիւնն սկսա՞ւ տեղ մը թէ ոչ. սա՛ միայն գիտեմ որ Եւրոպա՝ շնորհիւ այս մեթոտին գեղեցկագիրներն այնքան շատ են որքան մեր մէջ անճոռնի գրերն։

(Շարունակութիւնն եկող շաբթու)

Նուաստ անձնուէր
Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Սիսէն գրուած նամակ մը յիշած էինք մեր նախորդ թերթովը, այսօր հրատարակել խոստանալով։ Ասասիկ։

«Սոյ կաթողիկոսական վանքը ահագին շէնք մ'է հաստատ պարսպի մէջ. ունի բաղում սենեակներ և այլ և այլ շէնքեր կկրէ. սակայն, աւա՛ղ, որ երբէք իւր հին դիրքին մէջ մնացեալ և աւերակ չդարձած սենեակ մը գտնել անկարելի է։ Երբ անձրև մը կսկսի, ա՛յդ շինուածոց փլման ձայներն ալ հետը կըսկըսին. սենեկացը մէջ ամենէն նորա-

գոյնն համարուող Դարպաս անուամբ մեծ սենեակ մը կայ, ուր վանուցս մէջ գտնուող 3–4 վարդապետք կը բնակին. այդ սենեկին ալ մէկ կողմն փլած է. երբ անձրև մը գայ՝ կսկսի այդ աւրուած տեղէն հողեր թափիլ և ողջ եղած տեղերէն ալ կաթիլն չդադրիլ. հոս գըտնուողք չեն կրնար հանգիստ քնանալ և և կոտիպուլին ելլել անկողիններէն և այն գիշեր առանց քունի մնալ, քանզի չունին ստակ մը որ այդ սենեակն նորոգելով այս թշուառութիւնն անհետացնեն. ի՞նչ ընեն. — Ազգն ձախ աչքովն անգամ նայիլ չուզեր. ոմանք տգիտաբար «Պօլսէն կաթողիկոս չեն տար, քէյֆը գիտէ թող աւերակ դառնայ» կըսեն, և անդին տէրը, փայլը և յառաջադիմութիւնը օր ըստ օրէ նշմարուող ուրիշ կրօնքէ կյափշտակուին, և այլք բոլորովին անտարբեր կկենան: Ի՞նչ ընեն վարդապետք. վանքը եկամուտ բերող երկու աւերակ ջաղացք միայն ունի, այս տարի անոնք ալ բոլորովին անհետանալու կէտն եկած են. միայն թէ հինգ վեց հարիւր ղուրուշ եկամուտով պարտէզ մ'ունի, որով և այլև այլ տեղերէ ընդունուած մէկ քանի հարիւր ղուրուշով կապրին. կապրի՛ն, սակայն ի՞նչ թշուառութեամբ. ուտելիքնին՝ ուտիք օրերն եթէ ան ալ ձեռքերնին անցնի (կամ փիլաւ մը և կամ ուրիշ կերակուր մը) և պահք օրերն ալ (դահանով լափա մը և կամ լոկ հաց) է. զատոնք ալ կարգաւ իրենք պիտի ելիեն և պիտի բերեն ի սեղան. դեռ այսպիսի այլ և այլ ծառայութիւններ կընեն, վասն զի չունին ստակ՝ որ սպասաւոր մ'ունենան:

«Օր մը ասոնց մէջ իրենց կրած թշուառութեանց վրայ վէճ մը բացուեցաւ, որոնք կըսէին թէ «եղբա՛յր, եթէ տեղ մը զմեզ գերի ընէին, ասկէ բիւրաւոր անգամ լաւ վիճակի մէջ հանգիստ կապրէինք». իրենց հարցուցի թէ ինչո՞ւ այս վիճակին չեն իմացներ Պատրիարքարանի, պատասխանեցին թէ «մի քանի անգամ ծանուցած են, և միշտ կրկնելու և գլխի ցաւ ընելու՝ ալ կամաչեն»:

«Արդարև շատ խղճալի և աղէտալի թշուառութեան մը մէջ կապրին. ա՛յնպիսի թշուառութեան մը որ անցեալներն ստիպուեցան՝ ա՛լ չդիմանալով թողուլ վանքը և ցրուիլ, սակայն տեղւոյս կառավարիչ վսեմ. Ապտ-իւլ-Գատիր էֆէնտի չթողուց՝ ապահովցնելով որ ինք Պատրիարքարան կդրէ և իրենց համար օգնութիւն կխնդրէ: Ի՛նչ և իցէ, ասոնց վիճակին ականատես ըլլալով՝ իրենց թշուառութիւնը նկարագրել ինձ համար ծանր է. քանի մը խօսք ալ դարձեալ վանքին աւերակաց վրայ ընելով վերջ կուտամ գրոյս:

«Վանքին մէջ կա՛ր աննման և ահագին շէնքով եկեղեցի մը. նա ալ սկսեր է աւերակութեան դիմել. զարմանալի և ահագին քարերով և անչա՛փ աղդասիրութեամբ և կրօնասիրութեամբ կառուցեալ այդ եկեղեցւոյ պատերն սկսեր են ճաթիլ, քարերը թափիլ և անձրեւոտ օրերն ալ ջուրեր վազել, ա՛յնպէս որ քիչ ժամանակի մէջ անշուշտ տակնուվրայ պիտի ըլլայ այդ սրբազան շէնքն ու յիշատակը:

«Անցեալ ձմեռ վանքին մէջ 10–12 սենեակ պարունակող յարկ մը բոլորովին տակնուվրայ եղաւ. նայինք այս ձըմեռ ալ ի՞նչ սենեակներ և շէնքեր անհետ պիտի ըլլան. դեռ այսպէս բիւրաւոր մանր մունր շէնքերու փլչիլն կը սեսնուի. հոս երբեմն խղճառատ և աղդասէր Հայեր կուդան կպտըտին, որոնք վայելով և ինչո՞ւ եկանք որ այսպիսի վեհ աթոռ մը այս վիճակումը մեր սրտին ցաւ յարոյց ըսելով և զղջալով դուրս կելլեն, և հոս հոն կսկսին աւաղել իւրեանց տեսած տեսարանին վրայ:

«Օր մը աւերակ խումբ մը սենեակներ և գեղեցիկ մարմարիոն քարերէ կառուցեալ աղնիւ բաղնիք մը կպտըտէի. պատերուն վրայ դրուածներ կարդայի, զորոնք հարկաւ աղդասէր անձինք դրած են, և որոնք վանքին աւերակաց և թշուառութեան վրայ տխուր ու սրբատառուչ ողբե՛ր են:

«Ո՞վ է այն, որ 15 տարիէ ի վեր կատարեալ կաթողիկոս մը իւր դահը չտեսնուող և օր ըստ օրէ խեղճութեան և թշուառութեան և աւերակութեան դիմող և նախնեաց ամենէն երեւելի յիշատակներէն մին եղող կաթողիկոսական աթոռի մը վրայ չխղճար ու չդթար. ո՞վ է այն, որ սորա դարման տանիլ ձեռքէն եկած ատեն դայն երբէք հոդ չընելով երեսի վրայ կձգէ իբր ոչինչ դործ մը, և կարօտ եղած տնօրէնութիւններն ընելով՝ այս թշուառութիւնը՝ որ համայն Կիլիկիոյ ազդայնոցս մեծ ցաւ պատճառած և դեռ պատճառելու վրայ է, չփութար մէկդի ընելու. — անշուշտ Պոլսոյ վարչութիւնն է, որ երբեմն այս խնդրոյս չափ ուշադրութեան արժանի չեղող խնդիրներն կը լուծէ, կը խորհի և կը կարդադրէ. սակայն այս ամենէն պիտանի խնդիրն ահա քանի՞ տարի է որ չը կրցաւ կարդադրել: Միթէ ազդային վարչութիւնն կարող չէ՞ այս խնդիրն՝ պէտք եղածներն ի դործ դնելով՝ կարդադրել, և ուրախացնել համայն ազդայինքս. — կարող է. սակայն ուշադրութիւնը կատարեալ և սրտի մտօք խնդրոյն վրայ չամփոփիր —:

«Ո՛ր խղճի խայթ չեն ըլլար այս թշուառութիւններն, ա՛լ հերիք է .... ազդային վարչութիւնն ալ թո՛ղ դթայ, հերի՛ք է ալ, մինչև դայժմ Կիլիկիոյ ժողովրդեան վրայ տիրած յուսահատութեան շարունակութիւնը. ա՛լ վարչութիւն թո՛ղ դութն ու խիղճն սոյն աթոռոյն թշուառութեանն ու աւերակաց վրայ դարձնէ. հերի՛ք եղաւ անտարբեր կենալն, ա՛լ սորա կարդադրութեանը վրայ թո՛ղ ուշադրութիւնը դարձնէ, և փարատէ Կիլիկիոյ ազդայնոց այս մասին կրած մեծ ցաւն:

Մ. Մ. Սէֆանեան

Կարինէն՝ Նոյ. 24:

«Ձմեռը հիմակուընէ իր սաստկութիւնը սկսեց. հացը և փայտը խիստ սուղ է. առևտուրը նուազ է. աղքատաց թիւը կաւելնայ:

«Սուտ է այն լուրը թէ Կարնոյ եկեղեցին կամ տուներ փլած են. Կարնոյ վրայ հրացանի գնտակ մը անդամ ինկած չէ. մեծ զօրութիւն կայ. մարտկոցները խիստ ամուր են. և լաւ հսկողութիւն կըլլայ. հեղհեղաբար դուրսերէն զօրք կդումարուի. թշնամին Բասէն և Տէվէ-պոյնի ըսուած տեղն է. հետևաբար շնորհիւ օգոստ. Սուլթաննուս կարինը ապահով է:

«Կառավարութիւնը քաղաքին լաւ կը հսկէ. իսլամ և Քրիստոնեայ ժողովուրդք շատ սիրով են. խաղաղ և անդորր է ժողովուրդը. միայն սղութիւնը ամէն մարդոյ համար ճնաստակար է:

«Ազգային դործեր և դպրոցները թէ և երեսի վրայ մնացած են (միայն ընկերական վարժարանը լաւ կշարունակէ). աղջկանց վարժարանը դոց է. բայց և այնպէս կյուսամք որ Ս. Առաջնորդի և աղդային պաշտօնատարաց շնորհիւ բարեկարդութիւն պիտի սկսի. տա՛ր Երկինք, պատերազմի աղէտը վերնար, և ցանկալի վիճակ մը ձեռք իյնար այն է խաղաղութիւնը. որոյ համար ամէն մարդ առ Աստուած կաղաչէ»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստ. Սուլթանը երեկ ցերեկ Սուլթան Պայազիտի մզկիթին մէջ աղօթեց: Հանդիսիւ զինուորական պաշտօնատուները դնաց, ուր զօրքը Նորին վեհափառութեան համար քանիցս բարեմաղթեցին: 14 վաշտ կանոնաւոր հետևակ, 20 վաշտ քաղաքային և հրշէջ, և խել մ'ալ թնդանօթաձիգ և հեծեալ, և զինուորական վարժարանին ուսանողք ներկայ էին, ընդ ամենը 35–40 հազարի չափ, զորոնք ամենքն ալ աչքէ անցուց: Նորին վեհափառութիւնը Քէօշկին առջև կանգնելով՝ հրամանատարներն կանչեց և պալատան Ֆէրիդ Սայիտ փաշայի միջոցաւ քաջալերեց զանոնք, ըսելով — «Հայրենեաց պաշտպանութիւնը աշ-«խարհի մէջ ամենէն նուիրական պարտք-«մ'է. ձեր ընկերաց այս մասին ըրած «ծառայութիւնը դոհունակութեան ար-«ժանի է, և ձեր ալ անոնց հետեւող «գտնուելուն վրայ տարակոյս չկայ»:— Ասկէց յետոյ զօրահանդէս եղաւ, և Նորին վեհափառութիւնը 300 ի չափ նորատիպ շքադրամ բաժնել տուաւ պատերազմաց մէջ վիրաւորեալ և քաջութեամբ երևելի հանդիսացող զօրականին: Այս հանդիսին ներկայ էին մեծ եպարքոսն, Շէյխ-իւլ-Իսլամ էֆէնտին, և այլ նախարարք, ինչպէս նաև Հընդկաստանի մահմետականաց հանդանակութեան արդիւնքը մայրաքաղաքս բերող Ազմէթ Հիւսէյին՝ որ Օգոստ. Սուլթանին ներկայանալու պատիւ ունեցաւ:

— Ստոյգ և կարևոր տեղեկութիւն մը չկայ քանի մ'օրէ հետէ պատերազմական անցից վրայ: Սօֆիայի պարպըուիլը, և ուրիշ այսպիսի զրոյցներ՝ իբրև ստոյգ չեն կրնար համարուիլ: Կկարծուէր, թէ ռուսական զօրքը՝ Բլէվնայի դրաւման վրայ շաբաթ մը հանգիստ առնելէն յետոյ կարևոր շարժումներ ընել կսկսի. բայց այս կարծիքն ալ ի դերև ելաւ՝ գլխաւորաբար ձմրան սաստկութեան պատճառաւ: Շաքիր փաշայի մէկ վերջին հեռադիրն կհաստատէ զայս՝ ծանուցանելով, թէ ձմեռը արդելք կըլլայ զինուորական շարժմանց:

— Օսմանեան երեսփոխական ժողովն հինգշաբթի աւուր նստին մէջ նախագահութեան և փոխ-նախագահութեան համար ընտրութիւններն ըրած ըլլալով, օգոստ. Սուլթանին պիտի ներկայանացուի ցանկը՝ վերջնական ընտրութեան համար։

— Հինգշաբթի երեկոյ դեսպանք ժողովուեր են աւստրիական դեսպանատան մէջ։

— Կէլիպոլիի մէջ կառավարութիւնն սկսեր է քաղաքային զինուորագրութիւն ընել քրիստոնեայներէն։

— Յունաց նախկին պատրիարք Անթիմոս հինգշաբթի վախճանեցաւ, և երէկ յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ։ Երբ անգամ պատրիարքական դահը բարձրացած է։ Շատ ջանացած է սա, պուլղարաց բաժանումն արգիլելու համար։

— Քաղաքային զինուորագրութեան համար յունաց Պատրիարքարանին շրջաբերականը վաղը պիտի կարդացուի յունական եկեղեցեաց մէջ։ Պատճէնը՝ որ կանխաւ Բ. Դուռը ղրկուած էր, թէ՝ օգոստափառ Սուլթանը և թէ՝ նախարարաց ժողովը տեսեր, առանց դիտողութեան ընդուներ ու Պատրիարքարան դարձուցեր են։ Մեր լսածին նայելով, յունաց Պատրիարքարանը այսու կյորդորէ զժողովուրդն ի քաղաքային զինուորագրութիւն, ծանուցանելով թէ ներկայ պատերազմին չպիտի մասնակցին, և միայն իրենց քաղաքները պիտի պահեն։

— Վանայ կուսակալ Հասան փաշա դեկտ. 5 թուով հեռագրեր է բարձր. մեծ Եպարգոսին, թէ տեղւոյն պաշտօնակալաց միջոցաւ մահմետականք և քրիստոնեայք այս անգամ հանդերձ և անկողին նուիրեր են օսմանեան վիրաւոր զօրաց համար, և թէ՝ ուրիշ անգամներ ալ այսպիսի նուէրներ ըրած են տեղւոյն բնակիչք։

— Օսմանեան երեսփոխաններէն Իպրահիմ փաշա Սէլանիկի կուսակալ ընտրուելուն պատճառաւ, նորա տեղ Ասիմ էֆէնտի ընտրուեցաւ։

— Բուսմելիի երկաթուղւոյն արտօնատէր Պ. Հիրշ Պօլիս իւր գործակատարին գրեր է, որ Բուսմելիէն գաղթեալ հրէից ամուսնութեան ժամանակն հասած աղջկանց օժիտները իւր (Հիրշի) անձնականէն շինէ . . ։

Պէյօղլու բնակող դաղղիական հրապատակը՝ աշխարհի մէջէն պատերազմը բոլորովին վերցուելու նպատակաւ պայմանագիր մը շարադրեր է, պատերազմին աղէտքն ու խաղաղութեան բարիքն նկարագրելով։ Այս գիրը Շէյխ-իւլ-Իսլամ էֆէնտիին, Պօլսոյ պապական պաշտօնատան և հրէից խախամագլխին տարեր, և ստորագրել տուեր է։ Երկուշաբթի բարձրապատիւ մեծ եպարգոսին ալ ներկայացուցեր, և առաջարկեր է ստորագրել բայց Նորին բարձրութիւնը պատասխաներ է թէ այսպիսի գիր մը ստորագրել՝ օգոստ. Սուլթանին անկ է։ Հեղինակը միանգամայն ծանուցեր է, թէ ռուսաց կայսրն ու Պիզմարգ իշխանն ալ պիտի ստորագրեն, ինչպէս նաև ուրիշ նշանաւոր կղերականք ու աշխարհականք։ Աշխարհիս վրայէն պատերազմը վերցուելու համար քանիցս այսպիսի ջանքեր եղած են, բայց դժբաղդաբար անյաջող ու ապարդիւն մնացած են։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Լոնտրա. 19 դեկտ։ — Ստոյգ է, թէ ազգային խորհուրդարանը պիտի բացուի յունվարի 17ին։ Նախարարութիւնը խորհրդարանէն պիտի խնդրէ՝ ներկայ վիճակին պէտք եղած զօրքն սպառազինելու բաւական դրամական արտօնութիւն։ Սթանտար կըսէ, թէ խորհրդարանին բացումն կարեւոր և անհրաժեշտ դատուած է՝ նկատելով որ Գերմանիոյ և Աւստրիոյ կառավարութիւնք թոյլ կուտան Ռուսիոյ, ուզածին պէս վարուելու։ Նոյն լրագիրը գրած է, թէ Անգղիա պիտի պնդէ լսելի ընել իւր խօսքը։ Իսկ Թայմզ ընդհակառակն կդիտէ, թէ ազգային ժողովն դումարելու հարկ չը կայ, և Անգղիոյ համար ո՛ր և է վտանգ չտեսնուիր։ Միւս կողմանէ Կլոպ լրագիրն ալ կծանուցանէ, թէ կառավարութեան ընդունած և ազգին վաւերացուցած քաղաքականութիւնը հաշտական է, և Հնդկաստանի ճանապարհին ազատութիւնը պահելու կվերաբերի՝ եթէ կարելի ըլլայ։

20 դեկտ։ — Նախարարք այսօր նիստ ըրին՝ ամենքն ալ ներկայ գտնուելով։ Թագուհին անձամբ պիտի բանայ խորհրդարանը։

Փարիզ. 19 դեկտ։ — Լոնտոնէն տբրուած մասնաւոր տեղեկութեանց նայելով՝ Անգղիա իւր բռնելիք ընթացքը բացէ ի բաց պիտի յայտնէ, եթէ Ռուսիա Թուրքիոյ հետ առանձինն հաշտութիւն կնքելու դիտաւորութեան վրայ հաստատուն մնայ։

20 դեկտ։ — Օսմանեան դեսպան Արիֆի փաշա՝ այս երեկոյ Մագ-Մահոն նախագահին հետ ճաշեց։

Վիէննա. 20 դեկտ։ — Կըսուի, թէ Անգղիա՝ Ռուսիոյ առաջարկութեանց վրայ տագնապի մէջ ըլլալով՝ կաշխատի որ մեծ տերութեանց հետ միանայ և քաղաքագիտական ինչ ինչ միջոցներ ձեռք առնու։

Հռոմ. 20 դեկտ։ — Պապին և Ռուսիոյ մէջ համաձայնութիւն հաստատուեցաւ։ Ռուսական դեսպանը Հռոմ պիտի դառնայ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
10 Դեկտեմբեր 1877

Քոնսոլիտէ			9–
Սոսիէթէ ժէնէրալի բաժինք	նգ. լիր.		5–15
Քրէտի »	»	Օսմ. »	5– 5
Երկաթուղեաց՝ »		ֆր.	24–
Թրամուէյ		Օսմ. լիր.	90
1863ի փոխառութիւն		ֆր.	47–
1863ի »		»	48–
1869ի »		»	45–
1872ի »			22–

ԴՐԱՌ, Օսմ. լիրան 100էն

Մէճիտիյէ	107–	Ռուսիոյ բոլ	88–50
Մէճիտիէ	119–20	Գաղղ. լիրա	87–
Պղինձ	170–	Անգղ. »	109–10
Թղթադրամ	254–	Գրիմից	50–10

ՕՐԱՑՈՅՑ ՊԱՐԶ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ
1878
ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Ցօրինեալ
ՅԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԷ ԽԱՍԳԻՒՂԻ

Պարունակութիւն ընդարձակին

Օրացոյց պարզ.

Ազգ. Հոդեւոր գլուխ, և Ընդհ. ժողով.

Ազգ. վարչութիւն կրօնական՝ և քաղ. ժողով։

Ազգ. զանազան ժողովք. խորհուրդք, և հոդաբարձութիւնք.

Սկիզբն օսմանեան Տէրութեան.

Օսմանեան կայսր և կայսերազունք.

Բարձրաստիճան նախարարք Տէրութեան.

Հայազգի պաշտօնատարք ի Բ. Դուռն.

Թիւ մարդկան ընդ ամենայն երեսս երկրի.

Թիւ ազգիս Հայոց.

Արժէք դրամոց զանազան ազգաց.

Մշտնջենաւոր աղիւսակ գիւտի աւուր ամսամտի.

Համեմատութիւն Եւրոպիոյ և Տաճկաստանի ժամուց և բոպէից։

Կը ծախսուի բոլոր դրամագրաց քով, Պարզ 60 փր. Ընդարձակ 3 ղ։

ՍՈԿՐԱՏԻ ՈԳԻՆ
ՐՕՍԻ ՏԸ ՃԻՒՍԹԻՆԵԱՆԻ

Ոգեկանութեան (սպիրիթիզմ) վրայ գրուած սոյն կարեւոր գործը որ Պ. Ց. Սվաճեանէ թարգմանուած և Իզմիրի Աբշալոյս Աբարոնեանի տպարանէն ի լոյս ընծայուած է, նոյնպէս կը ծախսուի Եէնի-ճամի Զիլինկիրլէր-ճատտէսի, թիւ 2, Ս. Ղ. և Եազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 25 սանթիմ։

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿՂԶԻ
ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԴԸ

Ժիւլ Վէրն անուանի հեղինակին սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործին երկրորդ հատորն ալ Իզմիրէն հասած ըլլալով, կը ծախսուի Եէնի-ճամի, Զիլինկիրլէր-ճատտէսի, թիւ 2, Ս. Ղ. և Եազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ
Գրեց Ն. Եղիշեան

Սոյն գեղեցկահիւս վիպասանութենէն՝ որոյ պատմական աղբիւրը Ռուբինեան հարստութենէն առնուած է, և որ Քրիստոսի 1145 թուականին Հայոց Կիլիկիոյ մէջ վերստին ձեռք բերած իշխանական մեծութեան ճշդրտատիպ պատկերն է, ամեն հայ պէտք է փութայ մի օրինակ ունենալ։

Կը ծախսուի ամեն հայ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։

ԹԵՍԱՒՐՈՍԻ
ԲԱՐՈՅԱԻՕՍՈՒԹԻՒՆ

Այս պատուական գիրքը այս անգամ շնորհիւ գեր. Խորէն եպիսկոպոսի Մխիթարեան դրաբարէն համառօտութեամբ աշխարհաբարի թարգմանուելով Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայեցաւ մաքուր տպագրութեամբ, ցուսալի է որ այս անմահ գործը մեծ ընդունելութիւն պիտի գտնէ ազգային վարժարաններէն և ընթերցասէր հասարակութենէն։

Գիրքը կազմեալ 316 երեսէ բաղկացած ըլլալով կը վաճառի Եէնի-ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եազմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 3 ֆրանք

ԻԼԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

—

Նանը աղիզ իտարէսի տէկիրմէնլէրի հասըլաթքնտան սաթըլաճաղ օլան իքի եիւզ պին գըյէ քէբէյին ագչէսի եիւզլիւք գայիմէ իւզ ղուրուշա օլարագ նագտէն վէ փէշինէն վիրիլուպ եէվմիյէ օնար պին գըյէսի գալտըրըլարագ եէկիրմի կիւն զարֆքնտա քեամիլէն արգասը ալընմագ շարթը իլէ պէհէր գըյէսի գըրգ իւչ պըչըգ փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ, քեանունի եվվելը բումինին օն իքինճի բաղար իրթէսի կիւնի միւզայիտէսի պիլիճրա գարարը գաթիսի վիրիլէրէք ֆիրուխթ օլունաճաղընտան, իշթիրասընա թալիպ օլանլէրին եէվմի մէղքիւրտէ տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի։

8 քեանունի–էվվել 1877

Պապը Սէրասքէրի

—

Սուլթան Մահմուտ խան թագ սէրահ հազրէթլէրի էվգաֆընտան Պէյօղլունտա թագսիմին ճանիպը պէսարընտա քեային իւղէրինտէ պիր պապ մահալլէսպիճի տիւքեանը իլէ, էպնիյէի սայիրէի միւշթէմիլ մալիւմ էլ մըգտար արսա պիլ միւզայիտէ սաթըլաճաղը պունտան էվվել ղազէթալէր վասէթասը ըլա իլան օլունմըշ ըտը։

Իշպու արսա թախմինէն եէտի եիւզ զէրա օլուպ, պունըն պէհէր զէրայի գայիմէ ֆիյաթը միրիյէ իլէ եիւչ եիւզ եէթմիշ ղուրուշա թալիպի էօհտէսինտէ պուլընտըղընտան՝ վէ իշ պու իլանըն եէկիրմի պիրինճի կիւնի թամ սաաթ տօղուզտա գարարը գաթիսի վիրիլէճէյինտէն՝ թալիպ օլանլէրին պու միւտտէթ զարֆընտա էվգաֆը Հիւմայուն վարիտաթ իտարէսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

—

Խաղինէյի էվգաֆը հիւմայունտան մաղպուլթ ադարաթը վագֆիյէտէն Օրթաքէյ վարօր իսկէլէսինտէ մա միւշթէմէլաթ դահվէ, վէ Գապաթաշ ճատտէսինտէ տէօրթ պապ, վէ Եէնի–պաղչէտէ ալթը, վէ Հըրգայի–սաատէթ ճիվարընտա իքի, վէ Գասըմ–փաշատա տէֆթէրտար–պաշ Հասան էֆէնտի ճամիի չէրիֆի թահթընտա իքի, վէ ճէրահ–փաշատա իքի, վէ Եէնի–ճամիտէ Տէօրթ, վէ Եագուպ–աղա ճամի թահթընտա պիր, վէ Պէշիկթաշտա Սէրանճէմա եօքուշունտա պիր պապ քի, ճէման եէկիրմի պապ տէքեաքին իլէ Գուրուչէշմէտէ քեային չէյմէնին Սագա կէտիկի, վէ Սուլթան Սէլիմտէ մաղազա, վէ Մամար–աճէմ մահալլէսինտէ պօսթան, վէ Հաթապ–դափուսընտա դահվէ տիւքեանը տօքսան պէշ սէնէսի մուհարրէմի ղուրրէսինտէն իթիպարէն իճար գելընաճաղընտան՝ թալիպ պուլունանլէրին նիհայէթ զիլհիճճէնին եէկիրմի պէշինճի կիւնինէ գատար միւթահիւտլէրի իլէ պէրապէր էվգաֆը Հիւմայուն վարիտաթ իտարէսինէ կէլմէլէրի։

—

Հարէմէյն խաղինէսինտէն մաղպուլթ էվգաֆտան ճէննէթմէքեան Սուլթան Պայազիտ խան վէլի թագ սէրահ հաղրէթլէրի վագֆը միւսթէղէլաթընտան Գուլէ–գափուսու ճիվարընտա գապրիսթան ճատտէսինտէ վագը մալիւմ էլ հուտուտ իքի գըթա արսա՝ Էվգաֆը հիւմայուն խաղինէսինտէն պիլ միւզայէտէ թալիպինէ ֆիրուխթ օլունաճաղընտան՝ թալիպլէրինին թարիխի իլանտէն իթիպարէն եէկիրմի պիր կիւնէ գատար Էվգաֆը հիւմայուն վարիտաթ իտարէսինէ կէլմէլէրի։

ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՆԴԻՍԻ
ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ
Ցեղ ի գրաւոր բան
Պօղոս Գ. Քիբէոպէճեան
ԳՈՐԾ ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Տպագրութիւն Արամեան
1878

Սոյն դուշնաքեայ երկասիրութիւնը՝ որ 32 երեսէ կը բաղկանայ՝ Նիւթոյն աղնուութեանը գրաբառ սահուն ոճոյն և աղգի աղգի գողտրիկ իմաստիցն համար՝ կաղանդի նուէր և Մրցանակաբաշխեան համար մէկ հատիկ արժանաւոր պարգև համարուած և արդէն սպառած է։

Այս անգամ Ն. Բարձրաշնորհ Սրբազնութեան անուան պաշտպանութեամբն հովանաւորեալ, Արամեան մաքուր տըպագրութեամբ և աւելի գեղեցիկ դերքով՝ թարգմանչէն խնամով ուղղեալ և ինչ ինչ ի կարևորաց յաւելեալ ի լոյս կընծայուի Ասիական բարենախանձ ընկերութենէն նորահաս ուսանողաց համար, այնու քաղցր ակնկալութեամբ որ անշուշտ սոյն Բ. տիպն ալ առաջնոյն բաստին պիտի արժանանայ, հայկական դրաւոր լեզուին վսեմութեանը վրայ ճաշակ ունեցող նորատի ուսանողներէն։

Գինն է 3 դահեկան ողջ թղթադրամ։

Դպրոցաց կաղանդի նուէրի համար մասնաւոր զեղչ կըլլայ։

Կեդրոնատեղին է դրատուն փարիզու Զադմագ ճըլար եօգուշու Յակոբեան խան թիւ 13։

Կը ծախուի բոլոր դրավաճառաց քով։

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ
Վ. ԾԱՆՆԻ
Բերա Մեծ փողոց Աղաճամիի թիւ 77
Ե Ի
Կ. Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2
Ներոպիոյ առաջին գործարաեաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղորէից ընտրութեամբն և դնոց չափաւորութեամբ հրաշակուած։

Մակի մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին շինած Ֆ. լաֆԷՆՇԷ, որ փոքրիկ ոչ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գըլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև։

Քաոֆ (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի։

Սինոֆէ–լ ոբ Քինին, զուտ և մաքուր, Բէլթիէ, Տիոպօսք, Ժօպսթ և Էվանս Լէզէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Ձկան ֆ–ղ, զուտ Քրիսթիանայի Բէլթկէր Մէլլերի գործարանէն ելած։

Եղերդէ (հինտիպա) խոհուէ, Լուտվիսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող որ հաստակ խահուէի հետ խառնելով դինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու։

Աբսուլիսպական սառոյց ամեն ժամու մէջ։

Տիկնէնի ջուր, մազերու անվրիպելի ներկ։

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ղղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Արտի և երիկամանց վրայ օգտակար աղդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, դլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անդամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կդգենու։

ONGUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւաւարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չերիփէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորսվին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հաղի, սրտի բարախման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր աղդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պոհեմ–գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նո. 7 կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն աօքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքսֆոլտ փողոց թիւ 533։

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ՁՈՐԵՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիա՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5.—Հատը 60 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ դրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անդամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անդամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն–Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պոլիս Ալաճա–Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաշա խան թիւ 3